ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

ՄԻՔԱՅԵԼ ՔՈՔԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարի հաստատած «ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1981—1985 թվականների և մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունները» մեր երկրի արտադրողական ուժերի զարգացման նոր բնագծեր են նախանշում։

Ժամանակակից պայմաններում սոցիալիստական էկոնոմիկայի հեռանկարային պլանավորման, կազմակերպման ու կառավարման բնագավառում կարևոր դեր է տրվում նպատակային կոմպլեքսային ծրագրերի կազմմանը և իրականացմանը։ ՍՄԿԿ XXVI համագումարը խնդիր դրեց «նպատակային կոմպլեքսային ծրագրերը ավելի լայնորեն օգտագործել որպես տնտեսական ու սոցիալական զարգացման պետական հեռանկարային պլանների օրգանական բաղկացուցիչ մասեր, բարձրացնել դրանց հիմնավորվածությունը, նպատակամղվածությունը վերջնական արդյունքներին և գիտատեխնիկական, տնտեսական ու սոցիալական կոնկրետ խնդիրների լուծմանը»[1]։

Գիտատեխնիկական, տնտեսական ու սոցիալական զարգացման կոմպլեքսային ծրագրերը հնարավորություն են տալիս կառավարման տարբեր աստիճաններում լուծել համամիութենական, ռեգիոնալ, ճյուղային և այլ խնդիրներ, դրանցից յուրաքանչյուրի լուծմանը, որպես ամբողջական սիստեմ, մոբիլիզացնելով երկրի (իսկ հաճախ նաև երկրների) տնտեսական, գիտատեխնիկական և այլ կազմակերպությունների նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսները։

Միութենական նշանակության կոմպլեքսային նպատակային ծրագրերի մշակման հետ միասին անհրաժեշտ է նման ծրագրեր մշակել հանրապետությունների, տնտեսական շրջանների, քաղաքների, արտադրական միավորումների ու գործարանների մասշտաբով, որոնց նպատակն է առաջնահերթ գիտատեխնիկական, տնտեսական և սոցիալական խնդիրների կոմպլեքսային լուծման միջոցով բարձրացնել հասարակական արտադրության արդյունավետությունը։

Հանրապետական նշանակության նպատակային ծրագրերի մշակման համար նկատելի պետք է ընդունել դրանց բնակլիմայական, դեմոգրաֆիական և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները։ Ելնելով այդ

---

[1] «Սովետական Հայաստան», 6. III. 1981։

երեք առանձնահատկություններից՝ ներկայումս մեր հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման ամենահրատապ պրոբլեմներից մեկը պետք է համարել խոշոր քաղաքներում և հարթավայրերում բնակչության կենտրոնացման արգելակումը և հանրապետության տարածքի քիչ թե շատ կայուն ու համաչափ բնակեցման ապահովումը։ Այդ խնդրի լուծումը պահանջում է կոմպլեքսային միջոցառումների իրականացում և սկզբունքային մի քանի բարդ խնդիրների լուծում։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանրապետության տարածքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է ավելի քան 1800 մ։ Հանրապետության տարածքի ավելի քան 70%-ը և բնակավայրերի 52,5%-ը գտնվում են ծովի մակերևույթից 1500 և ավելի մետր բարձրության վրա։

Չնայած իր այդպիսի լեռնային տարածքին, հանրապետությունը Միության ամենախիտ բնակեցված շրջաններից է։ Այսպես, եթե ՍՍՀՄ-ում 1979 թ. միջին հաշվով 1 կմ² վրա ապրում էր 11,9 մարդ, ապա Հայկական ՍՍՀ-ում՝ 103,2 մարդ։

Մեր հանրապետության բնակչության աճման տեմպերը զգալիորեն գերազանցում են ինչպես Միության, այնպես էլ առանձին վերցրած մի շարք հանրապետությունների համապատասխան ցուցանիշները։ Այսպես, 1970—1979 թթ. Հայկական ՍՍՀ բնակչությունն ավելացել է 22,1 %-ով, այն դեպքում, երբ ՍՍՀՄ բնակչության աճը, այդ նույն ժամանակահատվածում, կազմել է 9%։

Բնակչության բարձր խտության պայմաններում հանրապետության ռելիեֆի և բնակլիմայական պայմանների, ինչպես նաև նրա տարածքում արտադրողական ուժերի ոչ համաչափ զարգացման հետևանքով անհամեմատ մեծ են բնակչության խտության տարբերությունները շրջաններում և գոտիներում (1 կմ² վրա 17—300 մարդ)։

Հեռանկարում հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել ևս մեկ առանձնահատկություն։ Դա մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական օգտագործելի հողատարածության խիստ սահմանափակությունն է։ Հանրապետության տարածքի ավելի քան 50%-ը մեծ թեքություններ (16° և բարձր) և մեծ բարձրություն (ծովի մակերևույթից 2000 մ. ավելի) ունենալու պատճառով գյուղատնտեսական օգտագործման համար պիտանի չէ։ Հայկական ՍՍՀ-ում մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական օգտագործելի հողերը 1978 թ. կազմել են 0,4 հա, վարելահողերը՝ 0,17 հա, այն դեպքում, երբ ՍՍՀՄ միջինը համապատասխանաբար կազմել է՝ 2,1 և 0,9 հա։ Միութենական հանրապետությունների շարքում Հայաստանն առաջին ցուցանիշով գրավում է վերջին տեղը։ Հեռանկարում բնակչության մեծ չափով ավելացման հետևանքով հանրապետության այդ ցուցանիշներն էլ ավելի կվատանան։

Հանրապետության վարելահողերի խիստ սահմանափակությունը հնարավորություն չի տա հետագայում գյուղատնտեսության մեջ ընդգրկել մեծ թվով աշխատուժ։ Բացի այդ, գյուղատնտեսական արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը բացարձակորեն կրճատում է աշխատողների թիվը գյուղատնտեսության մեջ։

Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման հարցերը լուծելիս պետք է հաշվի առնել ևս մեկ առանձնահատկություն. դա նրա բնակչության և արտադրական պոտենցիալի խիստ կենտրոնացումն է խոշոր քաղաքներում։ Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում կենտրոնացված է հանրապետու-

թյան բնակչության ավելի քան 45, իսկ արդյունաբերական արտադրական կարողությունների՝ մոտ 70%-ը։

Ելնելով հանրապետության վերը նշված առանձնահատկություններից, ՀԿԿ XXVII համագումարը որոշեց 1981—1985 թթ. և մինչև 1990 թ. ընկած ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության զարգացումը տանել արդյունաբերության աշխատատար, սակավ մետաղատար ու էներգատար ճյուղերի ընդլայնման, աշխատանքային ռեսուրսների առավել լրիվ օգտագործման նպատակով արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխման, գյուղատնտեսության արդյունավետության և ինտենսիվացման բարձրացման, գիտության ու տեխնիկայի նվաճումների լայն օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման պրոբլեմների լուծման, բնակչության աշխատանքի ու կենցաղի պայմանների է՛լ ավելի բարելավման ուղղություններով։ Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացման նշված խնդիրները լուծելու համար առաջնահերթ է դառնում կոմպլեքսային նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը։

Հանրապետության բոլոր շրջանները համաչափ զարգացնելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք կոմպլեքս միջոցառումներ. դրանք են. 1. տեղում բնակչության զբաղվածության պրոբլեմի լուծումը։ 2. գյուղական բնակչության սոցիալական և կուլտուր-տեխնիկական զարգացման ապահովումը, 3. հաղորդակցության ուղիների զգալի բարելավումը և հաղորդակցության ու կապի միջոցների զարգացումը։ 4. գյուղական բնակավայրերի կոմունալ-կենցաղային պայմանների արմատական բարելավումը։

Նման մոտեցումը բխում է ՍՄԿԿ XXVI համագումարի առաջադրած խնդիրներից։ Համագումարը խնդիր դրեց իրականացնել կոմպլեքսային մոտեցումը՝ ժողովրդական տնտեսության փոխկապակցված ճյուղերի և երկրի տնտեսական շրջանների զարգացումը պլանավորելիս։

Հանրապետության բոլոր շրջանների զարգացման համակարգում առաջին պլանի վրա պետք է մղել ագրոարդյունաբերական կոմպլեքսների ստեղծումը, քանի որ գյուղական բնակչության առաջնահերթ խնդիրը գյուղատնտեսական մթերքների արտադրությունն է։

Գյուղատնտեսության մեծ չափով զարգացումը և ագրոարդյունաբերական ինտեգրացումը մեր հանրապետության պայմաններում առաջիկայում կապահովի լրացուցիչ աշխատատեղ, բայց աշխատուժի զբաղվածության պրոբլեմի լուծման լուրջ ռեսուրսներ լինել չի կարող։ Դա պայմանավորված է նրանով, որ նախ, հանրապետության լեռնային տարածքը հնարավորություն չի տալիս զգալիորեն ընդլայնել գյուղատնտեսական շրջանառության հողատարածությունները։ Դա նշանակում է, որ գյուղատնտեսության զարգացումը պետք է գնա ինտենսիվ ուղղությամբ։ Երկրորդ՝ գյուղատնտեսական արտադրության (հողագործություն, անասնաբուծություն) պրոցեսների կոմպլեքսային մեքենայացումը հետագայում կհանգեցնի գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվի բացարձակ կրճատման։

Հետևապես, հանրապետության շրջաններում բնակչության զբաղվածության պրոբլեմի լուծումը զուտ գյուղատնտեսական արտադրության զարգացման, ագրոարդյունաբերական ինտեգրացիայի միջոցով հնարավոր չէ։ Գյու-

ղատնտեսական մթերքների ինչպես արտադրության պրոցեսը (որում գնալով գերակշռող և տիրապետող է դառնում արդյունաբերական բնույթը), այնպես էլ գյուղատնտեսական մթերքների վերամշակման վրա բարձրացող արդյունաբերական ձեռնարկությունները աշխատատար չեն։

Հայաստանի կոմկուսի XXVII համագումարի նախանշած՝ հանրապետության գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղղությունները 1981—1985 թթ. և մինչև 1990 թ., նույնպես վկայում են, որ գյուղատնտեսական արտադրության զարգացումը առաջիկայում աշխատուժի զբաղվածության մեծ ռեզերվ լինել չի կարող։

11-րդ հնգամյակում և երկարատև հեռանկարում հանրապետության գյուղատնտեսության զարգացումը նախատեսվում է տանել հետևյալ ուղղություններով. ա) գյուղատնտեսական արտադրության հետագա ինտենսիվացում ավելի խոր մասնագիտացման, համակենտրոնացման, կոմպլեքսային մեքենայացման, քիմիացման ու մելիորացման, արտադրության տեխնոլոգիայի մեջ ժամանակակից գիտության նվաճումների ներդրման միջոցով։ բ) Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացում հողային, ջրային, նյութատեխնիկական և աշխատանքային ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործման միջոցով։ գ) Ինդուստրիալ հիմքի վրա անասնապահության փոխադրում և կերի կայուն բազայի ստեղծում։ դ) Ջերմոցային բանջարաբուծության առավել արագ զարգացում։

Ինչպես տեսնում ենք, հանրապետության գյուղատնտեսության զարգացման հետագայում բնորոշ կլինի ինտենսիվ ուղին։ Գյուղատնտեսության արտադրության տարածքային (էքստենսիվ) զարգացումը, նոր, մեծ մասշտաբի, հողատարածությունների մշակում համարյա չի նախատեսում՝ վարելահողերի մեծ ռեզերվներ չունենալու հետևանքով։

Ճիշտ է, 11-րդ հնգամյակի տարիներին զգալի աշխատանքներ կտարվեն ոռոգելի հողերի ընդլայնման (30 հազ. հա), ջերմոցային բանջարաբուծության զարգացման (90 հա), խաղողի նոր այգիների հիմնման (5,1 հազ. հա) ուղղությամբ և այլն, բայց դրանք գյուղում աշխատուժի զբաղվածության պրոբլեմի լուծման գործում էական դեր չեն կատարի։

Հանրապետության շրջանները համաչափ և կոմպլեքսային զարգացնելու, բնակչության լրիվ զբաղվածության պրոբլեմը լուծելու, ինչպես նաև գյուղական բնակավայրերի սոցիալական ու կուլտուրական զարգացումն ապահովելու նպատակով առաջնահերթ խնդիր է դառնում հանրապետության (հատկապես լեռնային ու նախալեռնային գոտիների) շրջաններում արդյունաբերական կոմպլեքսների տեղադրումը։ Ըստ որում, կառուցվող կոմպլեքսների (միավորումների) գործարանները, արտադրամասերը (1000 և ավելի աշխատատեղով) պետք է տեղադրվեն այնպիսի բնակավայրերում (գյուղերում), որ հնարավոր լինի աշխատանքով ապահովելու մի քանի բնակավայրերի ազատ աշխատուժը։ Դա հնարավորություն կտա մի կողմից խուսափել բնակչության խիստ կենտրոնացումից, մյուս կողմից՝ պահպանել գոյություն ունեցող բնակավայրերը։

Հանրապետության շրջաններում և առաջին հերթին լեռնային ու նախալեռնային գոտու շրջաններում խոշոր արդյունաբերական կոմպլեքսների (միավորումների) ստեղծումը հնարավորություն կտա.

1. խուսափել խոշոր քաղաքներում և հարթավայրերում բնակչության խիստ կենտրոնացումից, լուծել հանրապետության լեռնային տարածքի քիչ թե շատ

համաչափ բնակեցման պրոբլեմը՝ գյուղական բնակչության լրիվ զբաղվածության ապահովման միջոցով։ 2. Կոմպլեքսների ստեղծման շրջանում տնտեսել բնակարանային շինարարության համար նախատեսված միջոցներ (քանի որ գյուղական բնակչությունը հիմնականում ապահովված է անհատական բնակարաններով) և դրանք տրամադրել խոշոր ու միջին քաղաքներում բնակարանային սուր պրոբլեմի լուծմանը։ 3. Շրջաններում ստեղծված արդյունաբերական կոմպլեքսների միջոցները (սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության ֆոնդ) օգտագործել տեղերում սոցիալական զարգացման և կուլտուր-կենցաղային, կոմունալ ու ճանապարհաշինական նպատակներով, որոնց կարիքն առավել մեծ չափով են զգում հանրապետության շրջանները։ 4. Շրջաններում արդյունաբերական կոմպլեքսների տեղադրումը օբյեկտիվորեն կպահանջի համապատասխան ինֆրաստրուկտուրայի ստեղծում և ոչ արտադրական ոլորտի ընդլայնում, որը շրջանների սոցիալ-տնտեսական կոմպլեքսային զարգացման անհրաժեշտ պայմանն է։ 5. Վերջապես, կապահովվի հասարակության անդամների գործունեության առողջ կենսաոլորտ։

Այդ բոլորից հետևում է, որ 11-րդ հնգամյակից սկսած, հանրապետության կապիտալ ներդրումները հիմնականում պետք է ուղղվեն շրջաններում (առաջին հերթին լեռնային և նախալեռնային) արդյունաբերական նոր կոմպլեքսների ստեղծմանը։

Առաջադրված ծրագրի իրականացման գործում առանձնապես մեծ է մեքենաշինության, հատկապես ռադիոտեխնիկայի, էլեկտրատեխնիկայի և սարքաշինության դերը։ Հանրապետության գիտատեխնիկական պոտենցիալը հնարավորություն է տալիս առաջիկա հնգամյակներում մեծ զարկ տալ այդ գիտատար, ինֆորմատար, աշխատատար և սակավ նյութատար, այսինքն՝ գիտատեխնիկական առաջադիմությունն ապահովող արտադրության ճյուղերին։

Անհրաժեշտ է նշել, որ վերջին երկու հնգամյակներում գյուղական վայրերում բնակչության զբաղվածությունն ապահովելու նպատակով ստեղծվել են խոշոր արդյունաբերական արտադրական միավորումների մասնաճյուղեր։ Սակայն առանձին գյուղերում հիմնականում լքված արտադրական և դպրոցական շենքերում, 100—200 աշխատող ունեցող «այդ արդյունաբերական ձեռնարկությունները» տնտեսապես իրենց չեն արդարացնում (մեծ մասամբ վնասաբեր են), տեխնիկական վերակառուցման և հագեցման տեսակետից հեռու են ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության ներկայացրած պահանջներից։ Այդպիսի արտադրամասերը մասնակիորեն են լուծում զբաղվածության պրոբլեմն անգամ մեկ գյուղի մասշտաբով, որովհետև դրանցում կիրառվում է հիմնականում կա՛մ միայն տղամարդու, կա՛մ կանացի աշխատանք։ Հետևա-

---

2 Ի տարբերություն միութենական շատ հանրապետությունների, որտեղ ցանկացած վայրում կարող են կառուցվել խոշոր քաղաքներ (մեկ մլն և ավելի բնակչությամբ), Հայկական ՍՍՀ-ի լեռնային տարածքը և սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկություններն այդ թույլ չեն տալիս։ Հանրապետությունում 500 հազար բնակչությամբ անգամ մեկ քաղաքի ստեղծումը կնշանակի 10—15 շրջանի ապաբնակեցում։ Մենք չպետք է ձգտենք նոր ոչ միայն մեծ, այլ անգամ միջին քաղաքների ստեղծմանը։ Մեր հանրապետության լեռնային տարածքը մեզ թելադրում է պահպանել ու զարգացնել արդեն ձևավորված բնակավայրերը (դրանց տնտեսական միավորման բազայի վրա), յուրաքանչյուրը վերածել բարեկարգ և այսօրվա ու վաղվա մարդու տնտեսական, սոցիալական, կուլտուր-կենցաղային պահանջմունքները բավարարող քաղաքատիպ բնակավայրերի։

պես, գյուղի մասշտաբով լրիվ զբաղվածություն ապահովելու համար նույն վայրում անհրաժեշտ կլինի ստեղծել և՛ կանացի, և՛ տղամարդու աշխատանքի կիրառման երկու տարբեր արտադրական պրոֆիլ ունեցող փոքր արտադրամաս, որը տնտեսապես իրեն չի կարող արդարացնել։ Եթե մենք հանրապետության շրջաններում բնակչության զբաղվածության պրոբլեմը լուծենք մասնաճյուղերի և արտադրամասերի ստեղծման «ավանդական» ճանապարհով, ապա անհրաժեշտ կլինի բացել շուրջ 1500 արտադրամաս՝ այսօր գործող 100-ի փոխարեն։ Պարզ է, որ այդ ուղին պրոբլեմի լուծման համար տնտեսապես ճիշտ լինել չի կարող։ Վերջապես, այդ մասնաճյուղերը, որոնց գլխավոր ձեռնարկությունները գտնվում են քաղաքներում, էապես չեն նպաստում գյուղի սոցիալական զարգացմանը, ճանապարհաշինությանը և գյուղի կոմունալ-կենցաղային դրության բարելավմանը, քանի որ շահույթներից (եթե դրանք կան) կազմավորվող ֆոնդերը տնօրինում է գլխավոր ձեռնարկությունը։ Քաղաքներում դրանց օգտագործման բնագավառն անհամեմատ մեծ է և, բնականաբար, գյուղի փոքր և ոչ շահութաբեր արտադրամասերին այդ ֆոնդերից բաժին չի հասնում։ Այստեղից հետևում է, որ հանրապետության շրջաններում բնակչության զբաղվածության պրոբլեմի լուծման գլխավոր ուղին գրանցում արդյունաբերական կոմպլեքսների տեղադրումն է։

Հանրապետության շրջաններում արդյունաբերական, գիտաարտադրական ագրոարդյունաբերական կոմպլեքսների ստեղծման հետ միասին պրոբլեմի լուծմանը, այսինքն՝ հանրապետության առանձին ռեգիոնների կոմպլեքսային զարգացմանը, մեծ չափով կնպաստի գիտահետազոտական, նախագծային-կոնստրուկտորական կազմակերպությունների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ճիշտ տեղաբաշխումը։

Դրա հետ միասին, արդի սոցիալ-տնտեսական զարգացման պրոբլեմների լուծման, լեռնային ու նախալեռնային գոտիների, շրջանների կոմպլեքսային զարգացման ապահովմանը մեծ չափով կնպաստեն գիտաուսումնաարտադրական կոմպլեքսների ստեղծումը և դրանց տեղադրումը հանրապետության տարբեր շրջաններում։ Նման կոմպլեքսների ստեղծումը և դրանց ճիշտ տեղաբաշխումը հանրապետության տարածքում կլուծի երկու խոշոր պրոբլեմ. ա) ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության պահանջներին համապատասխան բարձրորակ կադրերի պատրաստում և բ) հանրապետության տնտեսական շրջանների կոմպլեքսային (գիտատեխնիկական և տնտեսական), ինչպես նաև սոցիալական զարգացման խնդիրների լուծում։

Գիտաուսումնաարտադրական կոմպլեքսը հնարավորություն կտա մի կողմից գիտության ու տեխնիկայի ամենամյա նորությունները հասցնել ուսանողությանը, իսկ մյուս կողմից՝ ամենօրյա արտադրական պրակտիկան, որպես ուսումնական պրոցեսի բաղկացուցիչ մաս, մասնագետին, բուհն ավարտելուց հետո, թույլ կտա անմիջապես մուտք գործել ստեղծագործական աշխատանքի շրջան։ Երկրորդ խնդրի լուծման անհրաժեշտությունը բխում է նրանից, որ մեր հանրապետությունում (չնայած նրա փոքր տարածքին) գիտահետազոտական, նախագծային-կոնստրուկտորական կազմակերպությունները, բուհերը, արդյունաբերական օբյեկտները կենտրոնացվել են խոշոր քաղաքներում (Երևան, Լենինական, Կիրովական)։ Գիտահետազոտական, նախագծային-կոնստրուկտո-

յական հիմնարկների և բուհերի բացարձակ գերակշռող մասը տեղադրված է Երևանում։ Այսպես, հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողության 90, միջին մասնագիտական կրթության ուսանողության ավելի քան 50 և գիտական աշխատողների 70%-ը կենտրոնացված է Երևանում։ Նման իրավիճակը չի նպաստում հանրապետության բոլոր շրջանների կոմպլեքսային զարգացմանը և առաջ է բերում երիտասարդ բնակչության ու բարձրորակ մասնագիտների հոսք դեպի Երևան։ Դա մի կողմից բացասաբար է ազդում հանրապետության շրջանների ու քաղաքների տնտեսական, կուլտուր-տեխնիկական ու սոցիալական զարգացման վրա, իսկ մյուս կողմից՝ լուրջ սոցիալ-տնտեսական պրոբլեմներ է ստեղծում հանրապետության մայրաքաղաքի համար, որոնց լուծումը շատ թանկ է նստում հասարակությանը։

11-րդ հնգամյակից սկսած Երևանը պետք է «բեռնաթափելը» գիտահետազոտական, նախագծային-կոնստրուկտորական հիմնարկներից ու բուհերից և դրանց բազայի վրա հանրապետության շրջաններում ստեղծել գիտաուսումնաարտադրական կոմպլեքսներ, գիտական, գիտատեխնիկական խոշոր կենտրոններ։

Ի դեպ, նկատենք, որ գիտահետազոտական և ուսումնական խոշոր օղակները ներկայումս, զարգացած բոլոր երկրներում, ստեղծվում են մեծ քաղաքներից 70—200 կմ հեռավորության վրա։

Միությունում և մեր հանրապետությունում գիտատեխնիկական կադրերի պատրաստումն ընդունել է այնպիսի մասշտաբներ, որ բոլոր շրջաններն ունեն բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ իրենց կադրերը։ Այսօր մեր հանրապետության ցանկացած շրջանում կարելի է ստեղծել նրանց աշխատանքի կիրառման համապատասխան օղակ (գիտատեխնիկական, գիտաարտադրական միավորում)։ Բացի այդ, մայրաքաղաքից հանրապետության շրջանների մեծ մասի հեռավորությունն այնպիսին է (30—120 կմ), որը հնարավորություն է տալիս սկզբնական շրջանում լայն չափով կիրառել նաև Երևանում արդեն հիմնավորված բարձրորակ գիտական կադրերի աշխատանքը։ Խնդրի արմատական լուծումը պահանջում է նաև մի շարք գիտահետազոտական ինստիտուտների և բուհերի փոխադրում հանրապետության շրջանները։

Հանրապետության շրջաններում վերը նշված բնույթի կոմպլեքսների տեղադրումը կնպաստի մի կողմից դրանց գիտատեխնիկական և կուլտուրական զարգացմանը, մյուս կողմից՝ տեղում բնակչության զբաղվածության պրոբլեմի լուծմանը։

Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացման մյուս՝ երրորդ, հանգույցը՝ շրջանների և բնակավայրերի ժամանակակից պահանջները բավարարող ճաղորդակցության ուղիների ստեղծումն է։ Հանրապետության որոշ արդյունաբերական հանգույցներում կարևոր նշանակություն կունենա երկաթուղային տրանսպորտի զարգացումը, բայց մեր շրջանների կոմպլեքսային զարգացման խնդրի լուծման գործում վճռական դերը պատկանելու է ավտոմոբիլային տրանսպորտին և ճանապարհաշինությանը։ ՍՄԿԿ XXVI համագումարը խնդիր դրեց «ընդլայնել ավտոմոբիլային ճանապարհների կառուցումը գյուղական վայրերում և ամենից առաջ այն ճանապարհների կառուցումը, որոնք շրջանային կենտրոնները, կոլտնտեսությունների ու սովխոզ-

ների կենտրոնական դաստակերտները կապում են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հետ»[3]։

Հանրապետության շրջանների կոմպլեքսային զարգացման նպատակային ծրագրի չորրորդ խոշոր հանգույցը գյուղական բնակչության կոմունալ պայմանների արմատական բարելավումը և կենցաղի վերակառուցումն է։ Ներկայումս սովետական քաղաքացին, անկախ նրանից, թե որտեղ է ապրում (քաղաքում, բանավանում, գյուղում), միայն բնակարանով բավարարվել չի կարող։ Հասարակության անդամների կրթական, կուլտուրական մակարդակների բարձրացումը ամենուրեք համապատասխան կենցաղի պահանջ է ներկայացնում։ Հանրապետությունում բնակչության արտակարգ մեծ հոսքը խոշոր քաղաքներ պայմանավորված է նաև գյուղերի, բանավանների, փոքր, միջին և խոշոր քաղաքների կոմունալ-կենցաղային պայմանների մեծ տարբերությամբ։

Բնակչության գյուղից քաղաք կատարվող հոսքի դադարեցումը և հակառակ ուղղությամբ հոսքի առաջացումը պահանջում է, զբաղվածության հարցի լրիվ կարգավորման հետ միասին, լուծել գյուղերի, բանավանների և քաղաքների ջրամատակարարման, բոլոր բնակարանները ջրով ապահովելու, գյուղի կենցաղը արմատապես բարելավելու պրոբլեմը։

Ճիշտ է, այսօր հանրապետության բոլոր բնակավայրերը մատակարարվում են ջրով, բայց համարյա ոչ մի բնակավայր չունի ջրամատակարարման հուսալի սիստեմ։ Անկամ Երևան, Լենինական, Դիլիջան, Էջմիածին և մյուս քաղաքները ջրով ապահովված չեն, շատ թաղամասերի բնակարաններում ջրի անընդմեջ մատակարարում չի կատարվում։ Առավել վատթար է բնակարանների ջրամատակարարման վիճակը փոքր քաղաքներում, բանավաններում և գյուղերում։ Հատկապես գյուղերում բնակիչների ջրամատակարարման հասկացությունը սահմանափակվում է հիմնականում ընդհանուր օգտագործման մի քանի ջրաբորակներ դնելով։

Չնայած դրան, պետք է նկատել, որ արտադրական ֆունկցիա իրականացնելու համար՝ հողերի ջրառատման, անասնագոմերի ջրամատակարարման համար միջոցներ չեն խնայվում։ Ժամանակն է, որ միջոցներ տրամադրվեն նաև գյուղական բնակչության բնակարանների կարգավորված ջրամատակարարման և կոյուղու սիստեմ ստեղծելու համար։

ՍՄԿԿ Կենտկոմի 1978 թ. հուլիսյան պլենումում ընկ. Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ «Այսօր հարցը կարող է դրվել միայն այսպես՝ տնտեսությունների ղեկավարները, կուսակցության կոմիտեները, սովետական և արհմիութենական մարմինները գյուղի աշխատավորների բնակարանային ու կենցաղային կարիքների, նրանց աճած կուլտուրական պահանջմունքների բավարարման նկատմամբ պակաս հոգատարություն չպետք է ցուցաբերեն, քան արտադրության զարգացման նկատմամբ»[4]։

Եթե այսօր անհրաժեշտ նյութական և ֆինանսական միջոցներ տրամադրվեն կոմունալ-կենցաղային շինարարությանը, ջրամատակարարման կարգավորված սիստեմների ստեղծմանը, ապա կարճ ժամանակամիջոցում հնարավոր է լուծել հանրապետության գյուղերի ու բանավանների բնակչության կենցաղի

---

3 «Սովետական Հայաստան», 5. III. 1981։

4 Նույն տեղում, 4. VII. 1978։

արմատական վերակառուցման պրոբլեմը, այսինքն՝ գյուղում քաղաքային կենցաղ ստեղծելու հարցը։

Մեր Հանրապետությունն անհրաժեշտ հիմքեր ունի առաջիկա երկու հնգամյակներում լուծելու բոլոր բնակավայրերում կարգավորված ջրամատակարարման սիստեմի ստեղծման, բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների, հաղորդակցության ճանապարհների արմատական բարելավման, ամենուրեք քաղաքային կենցաղ ստեղծելու պրոբլեմը։ Առաջիկա 50 տարում Հանրապետության միայն աղբյուրների ջրերը կարող են լրիվ չափով բավարարել բնակչության կոմունալ-կենցաղային բոլոր տեսակի պահանջմունքները։ Ներկայումս Հայկական ՍՍՀ ջրային աղբյուրների արտահոսքը կազմում է 50 խմ/վրկ։ Ջրի այդ քանակը բավարարում է ավելի քան 8,6 մլն մարդու ջրի նկատմամբ ունեցած բոլոր տեսակի պահանջմունքները (1 շնչին օրական 500 լիտր ջրի հաշվով)։ Աղբյուրների ջրի ոչ ճիշտ և նպատակային օգտագործումը, ինչպես նաև ջրամատակարարման չկարգավորված սիստեմների հետևանքով մեծ կորուստները մեր շատ քաղաքներին, բանավաններին և գյուղերին զրկում են անգամ խմելու ջրի անընդմեջ մատակարարման հնարավորությունից։

Ներկայումս Հանրապետության համարյա բոլոր բնակավայրերը մատակարարվում են աղբյուրների ջրով։ Բայց գյուղական բնակավայրերը, որոնք բացարձակ գերակշռություն են կազմում (բնակավայրերի մոտավորապես 80 %-ը) չունեն խմելու ջրի կուտակման ամբարներ և օգտագործվում է ջրի միայն 1/20 մասը։

Եթե բոլոր գյուղերում ստեղծվեն ջրակուտակման ամբարներ ու ջրամատակարարման կարգավորված սիստեմ և օրը 1 շնչին 500 լիտր ջուր մատակարարվի, ապա Հանրապետության գյուղական բնակչության պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ կլինի մոտ 7 խմ/վրկ ջուր։

Աղբյուրների ջրով Հայաստանի հարուստ լինելը, որոշ իմաստով, խանգարում է քաղաքների, բանավանների ու գյուղերի ջրամատակարարման պրոբլեմի արմատական լուծմանը։ Բնակավայրերի ջրամատակարարման պրոբլեմի լուծման բոլոր նախագծերը կազմվում են այս կամ այն աղբյուրի ջրի տեղափոխման միջոցով։ Այդպես վարվելով, մենք «ստիպված» ենք Երևան տեղափոխել մոտակա շրջանների աղբյուրների ջրերը, հաճախ անտեսելով շրջակա բնակավայրերի, անգամ շրջկենտրոնների պահանջները։

Տրամաբանական է, որ միայն աղբյուրների ջրով (չնայած դրա մեծ քանակին) բոլոր քաղաքների, բանավանների և գյուղերի ջրամատակարարման պրոբլեմը լուծել հնարավոր չէ։ Պետք է նկատի ունենալ, որ աղբյուրների ջրի զգալի մասը օգտագործվում է ոռոգման նպատակներով։ Շատ տնտեսություններ, մանավանդ լեռնային գոտում, ոռոգման ուրիշ միջոցներ չունեն։ Նման տնտեսությունների տարածքի աղբյուրների ջրերը, թեկուզ որպես խմելու ջուր առանց տնտեսության ոռոգման հարցը լուծելու, այլ բնակավայրեր տեղափոխելը կտրականապես պետք է արգելել։

Հանրապետության բնակավայրերի ջրամատակարարման պրոբլեմը լուծելու համար պետք է մտածել նաև գետերի ջրերի օգտագործման մասին։ Գետերի ջրերը հիմնականում պետք է օգտագործել խոշոր և միջին քաղաքներին կենցաղային և տեխնիկական ջուր մատակարարելու նպատակով։ Միայն այդ

ճանապարհով է հնարավոր լուծել հանրապետության խոշոր քաղաքների ջրամատակարարման պրոբլեմը։

Վերոգրյալից հետևում է, որ հանրապետության բոլոր բնակավայրերի ջրամատակարարման պրոբլեմն արմատապես լուծելու համար անհրաժեշտ է. 1. Աղբյուրների ջրերի կորուստները հասցնել նվազագույնի՝ բոլոր բնակավայրերում ջրամատակարարման կարգավորված սիստեմներ ստեղծելու և ջրամբարներ կառուցելու միջոցով։ 2. Քաղաքներում ստեղծել խմելու ջրի և կենցաղային ու տեխնիկական ջրի մատակարարման առանձին սիստեմներ։ Այդ նպատակով 11-րդ հնգամյակից սկսած հարկ է նախատեսել գետերի ջրերի մաքրման և դրանք տեխնիկական ու կենցաղային նպատակներով օգտագործելու սիստեմների կառուցում։

Մեր հանրապետության առանձնահատկությունն այն է, որ նա հարուստ է աղբյուրների ջրով, կարող է և պետք է բնության այդ բացառիկ բարիքը, խմելու նպատակով, հասցնել բոլոր բնակավայրերը և բոլոր բնակարանները։ Այդպիսի լուրջ միջոցառումների իրականացումը բխում է ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումներից։ Համագումարը խնդիր դրեց «Բարելավել բնակչության կյանքի, բնակարանային և կուլտուր-կենցաղային պայմանները... զարգացնել քաղաքների և գյուղերի կոմունալ տնտեսությունն ու տրանսպորտը, դրանց բարեկարգումը»[5]։

Ինչպես տեսնում ենք, հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման կոմպլեքսային նպատակային ծրագիրը պահանջում է իրականացնել մի շարք ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող միջոցառումներ, որոնք լուծում են ոչ միայն ներկայիս հասունացած, այլև ապագայի խնդիրները։ Այդպիսի խոշոր կոմպլեքս ծրագրի իրականացումը հանրապետությունում, անշուշտ, ժամանակավորապես կիջեցնի կապիտալ ներդրումների արդյունավետությունը։ Կապիտալ ներդրումները բացարձակ գերակշռող մասով պետք է ուղղել նոր արդյունաբերական, գիտատեսամնաարտադրական, ագրոարդյունաբերական կոմպլեքսների, և ճանապարհաշինարարության և ջրամատակարարման սիստեմների ստեղծմանը, որոնք այդ ծրագրի լուծման առանցքային ուղիներն են։

Իհարկե, արտաքնապես դա կարող է հակասել արտադրության արդյունավետության բարձրացման կուսակցության նախագծած՝ կապիտալ ներդրումները հիմնականում գործող ձեռնարկությունների վերակառուցմանը և ընդլայնմանն ուղղելու կուրսին։ Բայց դա միայն արտաքնապես, հարցի ըմբռնման այսօրվա տեսանկյունից։

Եթե կապիտալ ներդրումները Հայկական ՍՍՀ-ում ուղղենք հիմնականում գործող ձեռնարկությունների վերակառուցմանը և ընդլայնմանը, ապա դա կնշանակի մեծացնել հանրապետության երեք խոշոր քաղաքները, քանի որ արդյունաբերության մոտ 70%-ը տեղադրված է Երևանում, Լենինականում և Կիրովականում, որը կ՝հասցնի հանրապետության բնակչության է՛լ ավելի կենտրոնացման և սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրների լուծման բարդացման, որոնք հետագայում կարգելակեն հասարակական արտադրության արդյունավետության բարձրացումը։

---

5 Նույն տեղում, էջ. 111. 1981.

Պետք է նկատել, որ մեր կուսակցությունը և կառավարությունը գիտատեխնիկական, տնտեսական և սոցիալական առավել կարևոր պրոբլեմների լուծման կոմպլեքս ծրագրերը իրականացնելիս հնարավոր են համարում կապիտալ ներդրումների ուղղության փոփոխում և արդյունավետության ժամանակավոր իջեցում։

Դրա արտահայտությունն է մասնավորապես նաև ԲԱՄ-ի կոմպլեքսի, Բրատսկ-Ուստ-Իլիմի տարածքային-արտադրական կոմպլեքսի, Արևմտյան Սիբիրում նավթի և գազի հանույթի խոշորադույն տարածքային-արտադրական և այլ կոմպլեքսների ստեղծումը։

Սոցիալ-տնտեսական կոմպլեքսային զարգացման նման ծրագրերի արդյունավետության գնահատման համար չպետք է ելնել ուղղակի կապիտալ ներդրումների և արդյունքի չափակցման գործող մեթոդիկայից, որն արտահայտում է նեղ ճյուղային էֆեկտը։ Սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումների իրականացման արդյունավետությունը գնահատելու համար պետք է հիմք ընդունել հասարակական ամբողջ ծախսումները՝ անկախ դրանց ծախսման աղբյուրներից (արդյունաբերական մինիստրության, ոչ արդյունաբերական մինիստրության, քաղաքային, շրջանային, գյուղական սովետների և այլն)։ Եթե ուղղակի կապիտալ ներդրումներից բացի հաշվի առնենք նաև ճանապարհաշինության, բնակարանային շինարարության, քաղաքային տնտեսության (կոմունալ, կենցաղ, ջրամատակարարում և այլն), քաղաքների բարեկարգման և այլ ուղղությամբ կատարվող անխուսափելի ծախսումները, ապա ճիշտ պատկերացում կկազմենք ամբողջի արդյունավետության մակարդակի մասին։ Այդ բոլորից հետևում է, որ սոցիալ-տնտեսական կոմպլեքս զարգացման նպատակային ծրագրերի իրականացման ուղղությամբ ներդրումների արդյունավետությունը պետք է գնահատել ոչ թե նեղ ճյուղային, այլ հասարակական, սոցիալ-տնտեսական արդյունավետությամբ։

Հանրապետական կոմպլեքսային նպատակային ծրագրի հետ միասին անհրաժեշտ է մշակել նաև միջճյուղային, ճյուղային զարգացման կոմպլեքսային նպատակային, ինչպես նաև քաղաքների ու շրջանների սոցիալ-տնտեսական կոմպլեքսային զարգացման ծրագրեր։

Մեր հանրապետության համար առանձնահատուկ նշանակություն ունի բնական ռեսուրսների (հատկապես գունավոր մետաղների, շինանյութերի, հանքային ջրերի և այլն) կոմպլեքսային օգտագործման ծրագրերի մշակումը։ Դրանցից համառոտակի կանգ առնենք միայն հանքային ջրերի կոմպլեքսային օգտագործման վրա։

Հանքային ջրերի ռեսուրսներով Հայաստանը, բնակչության 1 շնչի հաշվով, աշխարհում գրավում է առաջին տեղը։ Չնայած դրան, այն դեռևս համաշխարհային լայն ճանաչում չունի։ Դա բացատրվում է նրանով, որ և՛ արտադրական, և՛ բուժման նպատակներով հանքային ջուրը անբավարար ենք օգտագործում։ 1976 թ. տվյալներով հանրապետության հանքային ջրերի արտահոսքը կազմել է 1 խմ/վրկ։ Նույն թվականին, արտադրական և բուժման նպատակներով օգտագործվել է 475 հազ խմ ջուր (այսինքն 6 օրվա արտահոսքը), որից 308 հազ. խմ բուժական նպատակներով և 152 հազ. խմ՝ արտադրական նպատակներով (214,3 մլն շիշ հանքային ջուր)։ 1981 թ. նախատեսվում է հանքային ջրերի արտադրությունը հասցնել 345 մլն շշի։ Ամենակոպիտ հաշ-

վարկներով, լավագույն դեպքում, մենք ընթացիկ տարում կօգտագործենք մեր հանրապետության հանքային ջրերի միայն 8—10 օրվա արտահոսքը։

«Հայպետնախագծի» մշակած տվյալներով հեռանկարում հանրապետության առողջարանների և բուժիչ պանսիոնատների մահճակալների ֆոնդը կհասնի 40 հազարի։ Եթե 1981 թ. համեմատությամբ շշալցումը եռապատկենք, ապա 2000 թ., լավագույն դեպքում, արտադրական և բուժման նպատակներով կօգտագործենք հանրապետության հանքային ջրերի 20—25 օրվա արտահոսքը։

Հանքային ջրերի օգտագործման կոմպլեքսային ծրագրի կազմումը հնարավորություն կտա հանրապետության այդ անգնահատելի հարստությունն օգտագործել հանուն ժողովրդի բարօրության և միաժամանակ ստանալ մեծ եկամուտ։ Բավական է ասել, որ եթե մեր հանքային ջրերի 32 մլն խմ տարեկան արտահոսքի միայն կեսն օգտագործվի շշալցման նպատակով, ապա այն, այսօրվա գնահատումներով, կարող է ապահովել տարեկան ավելի քան 1,8 մլդ ռուբլու համախառն արտադրանքի ստացում, որը 2 անգամ կգերազանցի հանրապետության սննդի արդյունաբերության միինիստրության 1975 թ. թողարկած ամբողջ արդյունքը։ Ուստի նպատակահարմար և տնտեսական տեսակետից շահավետ է մշակել հանքային ջրերի օգտագործման կոմպլեքսային ծրագիր 11-րդ և 12-րդ հնգամյակների և առավել երկարատև ժամանակաշրջանի համար։ Ծրագիրը պետք է կազմվի այն հաշվով, որ դարի վերջին ապահովվի այդ արժեքավոր բնական ռեսուրսի անկորուստ օգտագործումը։ Այդ ծրագրում առաջին պլանի վրա պետք է մղել միջազգային նշանակության առողջարանների կոմպլեքսների ստեղծումը։ Երկրորդ խումբ միջոցառումները պետք է ուղղված լինեն խոշոր, ժամանակակից տեխնիկայով հագեցած, շշալցման արտադրական կոմպլեքսների ստեղծմանը, իսկ երրորդ խումբ միջոցառումները՝ հարակից արտադրությունների զարգացմանը (ապակե տարայի, առողջարաններին սպասարկող արտադրությունների և այլն)։ Չորրորդ խումբ միջոցառումներն էլ պետք է ուղղված լինեն կառուցվող կոմպլեքսների հետ հաղորդակցության ուղիների զարգացմանը։

Այստեղ թվարկեցինք հանքային ջրերի օգտագործման կոմպլեքս ծրագրի հիմնական հանգույցները։ Ծրագրի կազմման ժամանակ պետք է հաշվի առնել նաև մյուս մանրամասնությունները։

Ցրամաբանական է, որ նշված բոլոր հարցերի լուծումը, որպես մեկ ամբողջական կոմպլեքսային ծրագրի բաղկացուցիչ մասեր, պետք է կատարվեն տարբեր մինիստրությունների ու գերատեսչությունների համագործակցության միջոցով։

Քաղաքների տնտեսական և սոցիալական կոմպլեքսային զարգացման ծրագրերից կանգ առնենք Երևանի հեռանկարային մի քանի հարցերի վրա։

Երևանի զարգացումը հետպատերազմյան շրջանում գնաց այն ուղղությամբ, որ նրա շրջանները զարգացան ոչ թե որպես տնտեսական, սոցիալ-կուլտուրական մի ամբողջական կոմպլեքս, այլ դրանց առանձնացված սիստեմներ։ Այսօր Երևանում ձևավորվել է 3 «ննջարան» դանգված (արևելյան, արևմտյան և հարավ-արևմտյան), որտեղ բնակվում է հիմնական (այն էլ երիտասարդ) աշխատուժը։ Իսկ արդյունաբերական ձեռնարկությունները, ավանդական կերպով, տեղադրվել են քաղաքի հարավային և շատ քիչ մասով՝ հյուսիսային շրջանում։

Առանց մեր ռելիեֆի ու բնակլիմայական պայմանների առանձնահատկությունները և, ամենակարևորը, գիտատեխնիկական առաջադիմությամբ պայմանավորված ժամանակակից արդյունաբերության տեխնոլոգիայի փոփոխությունները հաշվի առնելու՝ Միության քաղաքաշինության ավանդույթը կրկնելու հետևանքով արդյունաբերական կոմպլեքսների և բնակելի զանգվածների առանձնացված սիստեմների ստեղծումն այսօր լուրջ սոցիալ-տնտեսական դժվարություններ է առաջ բերել հանրապետության մայրաքաղաքում։ Գերինտենսիվ է դարձել մարդկանց շարժը «ննջարաններից» դեպի արդյունաբերական զանգվածները։ Դա հասցրել է արանսպորտի գերբեռնվածության, մարդկանց աղատ ժամանակի հսկայական կորստի (աշխատավայր գնալու և վերադառնալու ժամանակ), նրանց հոգեկան լարվածության խիստ մեծացման ու տրամադրության անկման, որը բացասաբար է աղդում աշխատանքի արտադրողականության վրա, հանգեցնում է աշխատուժի հոսունության մեծացման։

Այսօր քաղաքների միկրոշրջանների կոմպլեքսային զարգացումը հրամայական պահանջ է դարձել։ Յուրաքանչյուր միկրոշրջան արդյունաբերա-առևտրաբնակարանային, կուլտուր-կենցաղային, գիտատեխնիկական կոմպլեքսների մի ամբողջություն պետք է ներկայացնի, որտեղ բավարարվեն յուրաքանչյուր բնակչի աշխատանքային, հոգևոր ու նյութական պահանջները։ Դա նշանակում է, որ այսօրվա բնակելի, արդյունաբերական, առևտրական, կուլտուրական ու կենցաղային (քաղաքի տարբեր մասերում ցրված) անջատ համալիրների փոխարեն պետք է ունենանք դրանց օրգանական մի ամբողջություն, ընդհանուր կոմպլեքս, քաղաքի միկրոշրջան կամ շրջան։

Իհարկե, մենք կանգ առանք միայն մի քանի անհետաձգելի խնդիրների վրա, որոնք կազմում են մեր հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման կոմպլեքսային ծրագրի բաղկացուցիչ մասերը։ Պրոբլեմի գործնական լուծման ընթացքում տրամաբանական է, որ առաջ կգան նոր հարցեր, որոնք կլրացնեն և կամբողջացնեն մեր նպատակային ծրագիրը։

ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОГО И СОЦИАЛЬНОГО РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ССР

МИКАЕЛ КОТАНЯН
Член-корр. АН Арм. ССР

Резюме

Одной из самых неотложных проблем социально-экономического развития нашей республики должно быть *ограничение централизации населения в крупных городах и равнинных поселениях, более полное и стабильное заселение районов республики, сохранение и развитие населенных пунктов в горных и предгорных районах.*

В целях предотвращения чрезмерной централизации населения в крупных городах и промышленных центрах и дальнейшей его децентрализации необходимо обеспечить равномерное размещение производительных сил и комплексное развитие районов республики. Для этого необходимо осуществить следующие мероприятия: 1. решить проблему занятости населения на месте; 2. обеспечить социальное и культурно-техническое развитие сельских районов; 3. коренным образом улучшить коммунально-бытовые условия сельских поселений; 4. значительно улучшить пути сообщения и развить средства передвижения.